Արձանագրություն 1

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019 թ.-ի օգոստոսի 30-ի նիստ:*

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ս. Կրոյանը, Յու. Մուրադյանը, Ն. Սամվելյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Ա. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Դայանը, Ս. Խաչատրյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչ՝ Ա. Խոեցյանը:

## Օրակարգ

1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական աշխատանքների 2019-2020 ուս. տարվա ծավալների քննարկում:
2. 2019-2020 ուս. տարվա նախապատրաստական աշխատանքների քննարկում:

1. **ԼՍԵՑԻՆ-** Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական աշխատանքների 2019-2020 ուս. տարվա ծավալների քննարկման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ամբիոնի վարիչ **Ա. Խոեցյանը-** 2019-2020 ուս. տարվա ծավալները կազմելիս մենք կապի մեջ ենք եղել Ձեզ հետ, ուս. ծավալները մի քանի անգամ փոփոխության են ենթարկվել, և ուզում եմ տեղեկացնել, որ էական փոփոխություններ չեն եղել դասախոսների բեռնվածքում, սակայն ուզում եմ տեղեկացնել, որ հաջորդ տարվանից լինելու են հիմնական առարկաների փոփոխություններ:

Եթե ծանրաբեռնվածության հետ կապված կան խնդիրներ խնդրում եմ տեղյակ պահել:

**Գ. Կարապետյան –** Ներկայումս մեր առջև դրված է նոր խնդիր՝ պատրաստել լանդշաֆտային պլանավորման մասնագետներ, և ես առաջարկում վերանայել առարկայացանկը, որպեսզի պատրաստենք ներկայիս պահանջներին համապատասխան մասնագետներ:

Արտահայտվեցին ամբյունի դասախոսներ՝ Ս. Կրոյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, ովքր դրական կարծիք հայտնեցին 2019-2020 ուս. տարվա ծավալների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝ 2019-2020 ուս. տարվա նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ **Ա. Խոեցյանը**- ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի մինչև սեպտեմբերի 1-ն արդեն պետք է պատրաստ լինեն առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, դասախոսության փաթեթները: Շուտով classroom էլ. հարթակում կստեղծվեն առարկաների դասընթացները, որտեղ պետք է տեղադրվի անհրաժեշտ ուսումնական փաթեթները: Ուզում եմ տեղեկացնել նաև, որ ռեկտորի որոշմամբ աշխարհագրության կաբինետը ժամանակավորապես պետք է ծառայի որպես լսարան:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

Աշխարհագրության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Ա. Խոեցյան
Ամբիոնի մասնագետ՝ Օ. Մարգարյան

## Արձանագրություն 3

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019 թ.-ի սեպտեմբերի 30-ի նիստ:*

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ս. Կրոյանը, Յու. Մուրադյանը, Ն. Սամվելյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Ա. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Դայանը, Ս. Խաչատրյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչ՝ Ա. Խոեցյանը:

### Օրակարգ

1. Առկա և հեռակա բաժնի ուսանողներին հանձնարարվող կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի հաստատում:
2. Ամբիոնի կողմից Classroom էլեկտոնային հարթակում իրականացվող մշտադիտարկում:
3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ- Առկա և հեռակա բաժնի ուսանողներին հանձնարարվող կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր՝ Ա. Խոեցյանը- ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաները պահանջում են հստակ մեթոդական և կրթական բաղադրիչների արտահայտվածություն և լուրջ խնդիր է թեմաների կրկնելիության հարցը:

Ես արդեն ծանոթացել եմ բոլոր թեմաներին, դրանց մեծ մասը համապատասխանում էր պահանջներին, իսկ որոշ թեմաներ, որոնք ավելի ընդհանրական բնույթ ունեին արդեն քննարկվել է դասախոսների

հետ և շտկվել: Կուրսային աշխատանքների թեմաները ևս համապատասխանում էին պահանջներին:

*Արտահայտվեցին* ամբիոնի դասախոսներ՝ Մ. Մաթոսյանը, Ս. Դայանը, Ն. Սամվելյանը և այլոք, ովքեր դրական կարծիք հայտնեցին քննարկվող թեմաների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել կուրսային և ավարտական աշխատանքները՝ նախնական տարբերակով:

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի կողմից Classroom էլեկտոնային հարթակում իրականացվող մշտադիտարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր՝ Ա. Խոեցյանը- Հարգելի դասախոսներ նախորդ տարի Classroom էլեկտոնային հարթակում մշտադիտարկում կատարում էր ամբիոնը, նշեմ, որ նոր ուսումնական տարվա մշտադիտարկման վերաբերյալ դեռևս պաշտոնական գրություն չենք ստացել, այդ իսկ պատճառով ամբիոնը կշարունակի նույն կերպ:

Տեղեկացնում եմ, նաև, որ Classroom էլեկտոնային հարթակում անդեն բացվել են ՀՄ և ՀԲ 2-րդ կուսերի էլ. դասընթացները, անհրաժեշտ է ամբիոնի Classroom-ի պատասխանատուին ուղարկել ամբիոնի նիստով հաստատված առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները /եթե ստեղծված են հեռակայի ժամանակացույցին համաձայն/, որպեսզի համապատասխան ժամկետներում դրանք տեղադրվեն էլ. հարթակում:

*Արտահայտվեցին* ամբիոնի դասախոսներ Մ. Մաթոսյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մուրադյանը, ովքեր ասացին, որ Classroom էլեկտոնային հարթակում ուսումնամեթոդական փաթեթները տեղադրվել և տեղադրվում են համապատասխան ժամկետներում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

**3. Ընթացիկ հարցեր**

ԼՍԵՑԻՆ- Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Ա. Խռեցյանի հաղորդումը ամբիոնի քարտեզագիր Տ. Բաբայանին ամբիոնի հայցորդ ձևակերպելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ պրոֆ. Ա. Խռեցյանը նշեց, որ Տ. Բաբայանը երկար տարիներ աշխատում է ԱԴՄ ամբիոնում, բազմաթիվ գիտական հոդվածների և գրքերի հեղինակ է:

Պրոֆ. Գ. Կարապետյանը, պ/պ. Յու. Մուրադյանը, դոց. Ն. Սամվելյանը, դոց. Ս. Դայանը, ովքեր արտահայտեցին դրական կարծիքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով արտահայտված կարծիքները դիմել ֆակուլտետի խորհուրդ Տ. Բաբայանին հայցորդ երաշխավորելու համար:

ԼՍԵՑԻՆ-Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Խռեցյանի հաղորդումը ամբիոնի դասախոս՝ Ա. Ա. Աջամօղլյանին դոցենտի գիտական կոչման հայցման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, պրոֆ.՝ Ա. Խռեցյանը նշեց, որ Ա. Աջամօղլյանը ամբիոնում աշխատում է երեք տարի որպես դասախոս: Տպագրել է մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ, թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո հրատարակել է երեք գիտական հոդված, հրատարակման են հանձնված ևս երեքը: Ա. Աջամօղլյանը ներկայացրել է պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Պրոֆ.՝ Գ. Կարապետյանը, պ.պ. Յու. Մուրադյանը, դոց. Ս. Կրոյանը, ովքեր դրական կարծիք հայտնեցին քննարկվող հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի վարիչի հաղորդումն ու ամբիոնի դասախոսների կարծիքը դիմել ֆակուլտետի խորհուրդ՝ Ա. Ա. Աջամօղլյանին դոցենտի գիտական կոչման հայցը երաշխավորելու համար:

Աշխարհագրության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Ա. Խռեցյան
Ամբիոնի մասնագետ՝ Օ. Մարգարյան

## Արձանագրություն 2

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019 թ.-ի սեպտեմբերի 11-ի նիստ:*

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Մ. Կրոյանը, Յու. Մուրադյանը, Ն. Սամվելյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Ա. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Դայանը, Ս. Խաչատրյանը, Ս. Բաղդասարյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչ՝ Ա. Խոյեցյանը:

## Օրակարգ

1.2019-2020 ուս. տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկում և հաստատում:

2.Classroom էլ. հարթակում էլեկտրոնային դասախոսությունների փաթեթների ընթացքի քննարկում:

1. *ԼՍԵՑԻՆ՝* 2019-2020 ուս. տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկման և հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ամբիոնի վարիչ, պրոֆեսոր՝ **Ա. Խոյեցյանը**- 2019-2020 ուս. տարվա առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները ներկայացված են քննարկման և հաստատման: Այս ուսումնական տարվա համար առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների նոր ձևանմուշ չի տրվել, անհրաժեշտ է վերանայել և ներբեռնել Classroom էլ. հարթակ, նշեմ, որ բոլոր էլ. դասընթացներն արդեն բացված են: Եթե կան որևէ խնդիրներ այս հարցի հետ կապված խնդրում եմ բարձրաձայնել:

Արտահայտվեցին՝ ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, ովքեր դրական կարծիք հայտնեցին հարցի վերաբերյալ, նշելով, որ կատարվում են վերջին շտկումները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել 2019-2020 ուս. տարվա վերանայված առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

2. *ԼՍԵՑԻՆ՝* Google classroom էլ. հարթակում էլեկտրոնային դասախոսությունների փաթեթների ընթացքի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր՝ **Ա. Խռեցյանը**- google classroom էլ. հարթակում բոլոր առարկաների դասընթացներն արդեն բացված են և անհրաժեշտ է տեղադրել առարկաների ուսումնամեթոդական փաթեթները՝ նորացված տարբերակով: Դասընթացների կոդերն ու փաթեթների որոշ մասն արդեն տրամադրվել է ուսանողներին: Եթե այս հարցի վերաբերյալ կան խնդիրներ խնդրում եմ բարձրաձայնել:

Նշեմ նաև, որ ինչպես նախորդ տարիներին այնպես էլ այս տարի կկատարվի մշտադիտարկում, խնդրում եմ լինել առավել ուշադիր և ժամանակին տրամադրել դասախոսությունների փաթեթները:

*Արտահայտվեցին*՝ Ամբիոնի դասախոսներ՝ Յու. Մուրադյանը, Մ. Մուրադյանը, Ա. Մինասյանը, Ս. Կրոյանը և այլոք, ովքեր ասացին, որ դասախոսության նյութերը տեղադրվել են, ուսումնամեթոդական փաթեթների հետ կապված խնդիրներ չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

Աշխարհագրության և նրա դասավանդման

մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Ա. Խռեցյան

Ամբիոնի մասնագետ՝ Օ. Մարգարյան

Արձանագրություն 4

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019 թ.-ի հոկտեմբերի 21-ի նիստ:*

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ս. Կրոյանը, Յու. Մուրադյանը, Ն. Սամվելյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Ա. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Դայանը, Ս. Խաչատրյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչ՝ Ա. Խոեցյանը:

## Օրակարգ

1. ՀՊՄՀ ռեկտոր Պարոն Ռ. Միրզախանյանի առաջարկով բոլոր ամբիոններում պարտադիր քննարկման ներկայացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների ընթացքի վերաբերյալ հարցը:
2. Առկա ուսուցման 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի և մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերպում և անցկացում:

1.ԼՍԵՑԻՆ- ՀՊՄՀ ռեկտոր Պարոն Ռ. Միրզախանյանի առաջարկով բոլոր ամբիոններում պարտադիր քննարկման ներկայացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների ընթացքի վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ Ա. Խոեցյանը- Ինչպես արդեն ասվել է ՀՊՄՀ ռեկտոր Պարոն Ռ. Միրզախանյանն առաջարկել է ամբիոններում քննարկել 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 2-րդ կուրսերի ատենախոսությունների ընթացքի վերաբերյալ հարցը: Նշեմ, որ բակալավրիատի 4-րդ կուրսում ես ավարտական աշխատանք չեմ ղեկավարում, մագիստրատուրայի ԼՊ 2-րդ կուրսերում ունեմ 3 , Աշխարհագրություն մասնագիտության 2-րդ կուրսում՝ 2 աշխատանք: Ընդհանուր առմամբ կարող եմ ասել, որ ուսանողները կատարել են

աշխատանքի մի մասը և շարունակում են իրենց հետազոտություններն ընտրված թեմայի շրջանակներում:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Ն. Սամվելյանը, Գ. Կարապետյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, ովքեր ասացին, որ 4-րդ կուրսերում արդեն ուսանողներն ընտրել են թեմաները, տրվել է գրականության ցանկը և աշխատանքի պլանը, իսկ մագիստրատուրա 2-րդ կուրսերում ուսանողներն աշխատում են թեմաների վրա, սակայն կան որոշ ուսանողներ ովքեր դեռ չեն ներկայացրել կատարված աշխատանքի տվյալները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Լինել ավելի խստապահանջ և հետևողական: Բոլոր ամբիոնի նիստերում պարտադիր քննարկել ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների ընթացքի վերաբերյալ հարցը:

2. ԼՍԵՑԻՆ- Առկա ուսուցման 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի և մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերպման և անցկացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ Ա. Խոյեցյանը- մանկավարժական պրակտիկաների կազմակերպման և իրականացման գործընթացը մշտապես գտնվում է ամբիոնի ուշադրության կենտրոնում, ամբիոնը կարևորում է պրակտիկաների որակյալ ու բարեհաջող ընթացքի ապահովումը: Նա նշեց նաև, որ մանկավարժական պրակտիկաների մշտադիտարկումն ամբիոնում կրում է շարունակական բնույթ:

Տեղեկացված եմ, որ 14.10.19թ. սկսվել է 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան, որն ավարտվելու է 22. 11. 2019թ-ին, այդ նպատակով ֆակուլտետի կողմից նախօրոք կազմակերպվել է կոնֆերանս՝ նախապատրաստական աշխատանքների համար:

Մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպվելու է նոյեմբերի 11-29-ը: Լանդշաֆտային պլանավորում բաժնի ուսանողները նոյեմբերի 11-20-ը պրակտիկան կանցկացնի Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում, իսկ նոյեմբերի 20-29-ը՝ ՀԱԱՀ Հ.

Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղում:

*Արտահայտվեցին* մանկավարժական պրակտիկայի ղեկավար-մեթոդիստներ՝ Մ. Մուրադյանը, Ա. Աջամօղլյանը, Վ. Հովհաննիսյան, Ս. Դայան, ովքեր նշեցին, որ մանկավարժական պրակտիկաներն ընթանում են համաձայն նախօրոք մշակված ծրագրի:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն և շարունակել աշխատանքները նույն կերպ:

Աշխարհագրության և նրա դասավանդման

մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Ա. Խոեցյան

Ամբիոնի մասնագետ՝ Օ. Մարգարյան

Արձանագրություն 5

*ԿԲԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019 թ.-ի նոյեմբերի 26-ի նիստ:*

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Յու. Մուրադյանը, Ն. Սամվելյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Ա. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Դայանը, Ս. Խաչատրյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչ՝ Ա. Խոեցյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի ասպիրատների, հայցորդների հաշվետվությունները մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

2. Հետևել կուրսային, մագիստրոսական և ավարտական աշխատանքների կատարման ընթացքին, կազմակերպել մագիստրոսների հետազոտական աշխատանքները:

3. Դասախոսների հաղորդումները սեմինար, գործնական, լաբորատոր, ինքնուրույն աշխատանքների կատարման վերաբերյալ:

4. ԱԲ 4-րդ, կուրսի մանկավարժական պրակտիկայի արդյունքների և ԱԲ 3-րդ, ԱՄ և ՀՄ 2-րդ կուրսերի պրակտիկաների ընթացքի քննարկում:

5. Ամբիոնի ասպիրանտ՝ Անի Մկրտումյանի կողմից գիտական սեմինարի անցկացում:

6. Ընթացիկ հարցեր:

1. *ԼՍԵՑԻՆ*- Ամբիոնի ասպիրանտների, հայցորդների հաշվետվությունները, մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքների հարցը:

*Լսեցին*՝ ասպիրանտ՝ Հայարփի Հակոբյանի հաղորդումն ընթացիկ տարվա աշխատանքների վերաբերյալ: Նա նշեց, որ ատենախոսության թեման հաստատվել է 2019 թ-ի ապրիլի 25-ին, ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում, որից հետո ղեկավարի հետ մշակվել է աշխատանքային պլանը և հստակեցվել խնդիրները:

2019թ-ի ընթացքում իրականացվել է ընտրված տարածաշրջանի բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսաաշխարհագրական պայմանները լուսաբանող գիտական

հրապարակումների և քարտեզագրական նյութերի վերլուծություն, կազմակերպվել շրջատեղազննման բնույթի երթուղային դիտարկումներ Գեղարքունիքի մարզում:

Պատրաստման փուլում է գտնվում աշխատանքի 1-ին գլուխը՝ Գեղարքունիքի մարզի ֆիզիկաաշխարհագրական պայմանները և ագրոռեսուրսային ներուժը:

Ն. Սամվելյանի հետ համատեղ 1 հոդված՝ անգլերեն լեզվով, ներկայացվել է հրատարակության:

Աշխատանքներն ընթանում են ըստ նախապես մշակված աշխատանքային պլանի:

*Լսեցին*՝ հայցորդ՝ Գայանե Բարսեղյանի հաղորդումը ընթացիկ տարվա աշխատանքների վերաբերյալ: Նա նշեց, որ 2018-2019 ուս. տարում ավարտել է ասպիրանտուրայի 4-րդ կուրսը:

2018-2019 ուս. տարում տպագրության է հանձնվել 2 գիտական հոդված:

Կապի մեջ է եղել ամբիոնի և գիտահետազոտական կենտրոնի հետ, տեղեկացվել նորություններին, այդ թվում նաև փիլիսոփայություն առարկայից մինիմումի հանձնմանը:

Գայանե Բարսեղյանը գտնվում է ֆիզիոլոգիական արձակուրդի մեջ:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ*՝ ամբիոնի վարիչ Ա. Խոեցյանը, պրոֆեսոր Ցու. Մուրադյանը, ամբիոնի դասախոսներ Մ. Մաթոսյանը, Ս. Դայանը, Ն. Սամվելյանը, ովքեր դրական կարծիք հայտնեցին ասպիրանտ Հայարփի Հակոբյանի և հայցորդ Գայանե Բարսեղյանի մեկ տարվա կատարած աշխատանքի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ*- Ելնելով կատարված աշխատանքներից և ներկայացված հաշվետվություններից՝ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Հայարփի Հակոբյանին և Գայանե Բարսեղյանին ատեստավորել:

2. *ԼՍԵՑԻՆ*- Մագիստրոսական, ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի, մագիստրոսների հետազոտական աշխատանքների կազմակերպման հարցը:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ*՝ ամբիոնի վարիչ Ա. Խոեցյանը- յուրաքանչյուր ամիս այս հարցը քնարկվելու է, հետագայում խնդիրներից խուսափելու համար: Եթե կան խնդիրներ ընթացքի հետ կապված խնդրում եմ տեղյակ պահել:

Մ. Մուրադյան՝ խնդիր կա հեռակա 2-րդ ԼՊ բաժնի ուսանող՝ Աբրահամյան Արենի հետ կապված: Դեռ աշխատանք չի կատարվել, ուսանողը չի ներկայացել, ես փորձել եմ կապ հաստատել սակայն արդյունք չի տվել:

Ս. Դայան՝ խնդիր կա հեռակա 5-րդ կուրսում սովորող ուսանողուհու հետ կապված, նա Հայաստանից բացակայում է և իր հետ շփումը դժվարանում է, ես կապ եմ հաստատում ուսանողուհու հետ համացանցի միջոցով:

Արտահայտվեցին ամբիոնի այլ դասախոսներ՝ Ն. Սամվելյան, Ա. Մինասյան, Ս. Կրոյան և այլոք ովքեր նշեցին, որ մագիստրոսական, ավարտական և կուրսային աշխատանքները կատարվում են ժամանակին և պատշաճ ձևով:

*ՈՐՈՇԵՑԻՆ* – Ընդունել ի գիտություն և լինել ավելի հետևողական:

3. *ԼՍԵՑԻՆ*- Դասախոսների հաղորդումները սեմինար, գործնական, լաբորատոր, ինքնուրույն աշխատանքների կատարման վերաբերյալ հարցը:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ*՝ ամբիոնի վարիչ Ա. Խռեցյանը- Գործնական պարապմունքների հետ կապված խնդիր ունենք, որը ԲՈՒՀ-ի տեխնիկական սպասարկման հնարավորությունների խիստ սահմանափակությունն է: Այս հարցերը բազմիցս քննարկվել են, սակայն դեռ փոփոխություններ չկան:

Վ. Հովհաննիսյան՝ Գեոինֆորմատիկա առարկայի գործնական և լաբորատոր պարապմունքները լիարժեք իրականացնելու համար անհրաժեշտ են համակարգիչներ, որպեսզի ուսանողները տեսական նյութը կարողանան գործնականում կիրառել:

Ինչ վերաբերում է մյուս առարկաների սեմինար, գործնական, լաբորատոր, ինքնուրույն աշխատանքների կատարմանը, նշեմ, որ իրականցվում են ժամանակին և արդյունավետ կերպով:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Ա. Մինասյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը ովքեր ևս նշեցին, որ վերոնշյալ բոլոր պարապմունքները կատարվում է ժամանակին և պատշաճ ձևով:

*ՈՐՈՇԵՑԻՆ* – Ընդունել ի գիտություն:

4. *ԼՍԵՑԻՆ*- ԱԲ 4-րդ, կուրսի մանկավարժական պրակտիկայի արդյունքների և ԱԲ 3-րդ, ԱՄ և ՀՄ 2-րդ կուրսերի պրակտիկաների ընթացքի քննարկման հարցը:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝* ամբիոնի վարիչ Ա. Խռեցյանը- արդեն ավարտվել է ԱԲ 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան, իսկ ԱԲ 3-րդ, ԱՄ և ՀՄ 2-րդ կուրսերում պրակտիկան դեռ շարունակվում է: Հիշեցման կարգով ասեմ, որ 10 օրվա ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել ներկայաթերթիկը, կատարողական ակտը և հաշվետվությունը: Խնդրում եմ նաև ղեկավարներին տալ կոնկրետ ինֆորմացիա պրակտիկաների վերաբերյալ:

*Մ. Մուրադյան*՝3-րդ կուրսի պրակտիկան դեռ ընթացքի մեջ է ամեն ինչ բարեհաջող է ընթանում, 4-րդ կուրսը պրակտիկան նացկացրել է 119 ավագ դպրոցում թվով 11 ուսանողներ, անհարգելի բացականեր չեն եղել, թիմային աշխատանքով նախատեսված բոլոր աշխատանքները ժամանակին իրականացվել է:

Մենք այսօր ներկայացրել ենք ներկայաթերթիկը, կատարողական ակտը և հաշվետվությունը, որևէ խնդիր չունենք:

*Ս. Դայան*՝ պրակտիկան անցկացրել ենք Սմբատ Բյուրատի անվան համար 125 հիմնական դպրոցում, թվով 9 ուսանող: Պրակտիկան անցել է բարեհաջող: Արձակուրդի շաբաթը դարձրել ենք մշակութային շաբաթ: անցկացրել են դասավարումներ, քննարկումներ է եղել ուսուցիչների հետ, ընդհանուր առմամբ գոհ եմ ուսանողներից: Պրակտիկայի վերջում կազմակերպեցին միջցառում, որից շատ գոհ եմ:

*Վ. Հովհաննիսյան*՝ Պրակտիկան անցկացվում էր Խ. Աբովյանի անվան թիվ 2 դպրոցում: Պրակտիկան շատ լավ է անցել, իրականացրել ենք մոտ 8 արտադպրոցական միջոցառումներ, իրականացվել են դասավարումներ և դասալսումներ, ամեն ինչ իրականացվել է բարձր մակարդակով:

*Ա. Աջամօղլյան*՝ Պրակտիկան անցել է բարեհաջող, ուզում եմ նշել որ արձակուրդների շաբաթը համընկնում է պրակտիկայի հետ, ուսանողները գնացել են դպրոց, ծանոթացել են փաստաթղթեին, սակայն ավելի նպատակահարմար կլիներ, որ պրակտիկան կազմակերպվեր այնպես, որ չհամկներ աշնանային արձակուրդին:

*Արտահայտվեցին* ՝Ա. Խռեցյանը, Ս. Խաչատրյանը, Մ. Մաթոսյանը, ովքեր ևս նշեցին որ պրակտիկաների հետ կապված խնդիրներ չկան մագիստրատուրա 2-րդ կուրսերի պրակտիկան դեռևս ընթացքի մեջ է:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն, շարունակել աշխատանքները՝ մանկավարժական պրակտիկայի անցկացման ընթացակարգին համաձայն:

*5. ԼՍԵՑԻՆ-* Ամբիոնի ասպիրանտ՝ Անի Մկրտումյանի կողմից անցկացվող գիտական սեմինարը:

Ներկայացվեց ատենախոսության 2-րդ գլուխի թեման՝ ,,Աշխարհագրության դասավանդման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման ուղիներն ու միջոցները,,:

Խոսվեց մասնավորապես՝

- Ուսուցման տեխնոլոգիայի բնութագիրի մասին
- Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը աշխարհագրության ուսուցման գործընթացում, որպես դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման ուղի
- ուսումնական ցիկլի կիրառման հարցում Բլումի դասակարգման կիրառումը /նպատակ ունենալով զարգացնել դպրոցականների հետազոտական կարողությունները/
- ,,Իմ դպրոց,, կայքում հեղինակային առաջադրանքների կիրառումը
- Միջառարկայական ուսուցումը
- ԲՈՎՈՒ-ի համալսարանում ուսումնառության արդյունքների հակիրճ ներկայացում

*Արտահայտվեցին՝* ամբիոնի վարիչ Ա. Խոեցյանը- Կարծում եմ նյութն ընդհանուր առմամբ ունի խտացնելու, ծավալային առումով փոքրացնելու կարիք: Հետագայում կայանալիք սեմինարներին ակնկալում եմ ծավալային առումով համեմատաբար քիչ և ավելի կոնկրետացված աշխատանք:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

*6. ԼՍԵՑԻՆ-* Աշխարհագրության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող Նարեկ Սահակյանի մագիստրոսական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ Ա. Խռեցյանը – նա նշեց, որ Նարեկ Սահակյանը 2018-2019 ուս. տարվա 2-րդ կիսամյակում ուսանել է Ավստրիայի ,,Բնական ռեսուրսների և կյանքի մասին գիտությունների,, համալսարանում, և հաշվի առնելով ուսուցանվող դասընթացները, սեփական մասնագիտական առաջնահերթությունները և բնակության վայրով պայմանավորված հետազոտության կատարման մատչելիությունը դիմում է ներկայացրել ամբիոն՝ մագիստրոսական ատենախոսության թեման փոփոխելու նպատակով, առաջարկվել է ,,ՀՀ Ճամբարակ համայնքի զբոսաշրջային ռեսուրսների աշխարհագրական ուսումնասիրությունը և դրա գիտակրթական արդյունքը (Կայուն զբոսաշրջության համատեքստում),, թեման:

Ուսանողը առաջարկվող թեմայի շրջանակներում կատարել է մի շարք հետազոտություններ, որոնք ներկայացվել են երկու միջազգային և մեկ հանրապետական գիտաժողովների, և տպագրել է երկու գիտական հոդված:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Ն. Սամվելյանը, Յու. Մուրադյանը, Ա. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, ովքեր դրական կարծիք հայտնեցին հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Հաշվի առնելով Աշխարհագրության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող Նարեկ Սահակյանի դիմումը դիմել ԿՔԱ ֆակուլտետի խորհրդին ,,ՀՀ Ճամբարակ համայնքի զբոսաշրջային ռեսուրսների աշխարհագրական ուսումնասիրությունը և դրա գիտակրթական արդյունքը (Կայուն զբոսաշրջության համատեքստում),, թեման հաստատելու համար:

*7. ԼՍԵՑԻՆ-* Էլեկտրոնային դասախոսությունների փաթեթների կիրառման ընթացքում վերահսկման և մշտադիտարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ Ա. Խռեցյանը – google classroom էլ. հարթակում ամբիոնի կողմից իրականացնում է մշտադիտարկում:

Մշտադիտարկման տվյալներից ելնելով կարող եմ ասել, որ բոլոր դասախոսները տեղադրել են դասախոսության փաթեթները, ամբիոնի կողմից տեղադրվել են առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, գնահատվող առաջադրանքները ևս տեղադրված են, էլ. հարթակում անհրաժեշտ է տեղադրել նաև միջանկյալ ստուգման հարցաշարերը, որը դասախոսների մեծ մասի մոտ բացակայում էր:

*Արտահայտվեցին* ամբիոնի դասախոսներ Մ. Մուրադյանը, Ս. Դայանը, Ն. Սամվելյանը և այլոք ովքեր ասացին, որ միջանկյալ ստուգման հարցաշարերը տրվել են ուսանողներին թղթային տարբերակով, և հնարավորինս շուտ նաև էլ. տարբերակով կտեղադրվեն Classroom:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն:

Աշխարհագրության և նրա դասավանդման

մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Ա. Խոեցյան

Ամբիոնի մասնագետ՝ Օ. Մարգարյան

Արձանագրություն 6

*ԿՊՀ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստ:*

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Մ. Կրոյանը, Յու. Մուրադյանը, Ն. Սամվելյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Ա. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, Մ. Դայանը, Մ. Խաչատրյանը, Ս. Բաղդասարյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչ՝ Ա. Խոեցյանը:

## Օրակարգ

1. Ամբիոնի մեկ տարվա կատարված աշխատանքների հաշվետվություն:
2. Պրակտիկայի ղեկավարների հաղորդումները արտադրական պրակտիկաների վերաբերյալ:
3. Ամբիոնի ասպիրանտ՝ Անի Մկրտումյանի կողմից գիտական սեմինարի անցկացում:

1. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի մեկ տարվա կատարված աշխատանքների հաշվետվությունը:
**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ամբիոնի վարիչ, պրոֆեսոր՝ **Ա. Խոեցյանը-** Նա նշեց, որ հաշվետու տարում ամբիոնի բոլոր աշխատանքներն իրականացվել են մշակված աշխատանքային պլանի համապատասխան: Դասախոսների կողմից վերանայվել, նոր առարկաների դեպքում նաև կազմվել են առարկայական նկարագրերը, ընթացիկ ստուգման հարցաշարերը, թեմատիկ տրոհումները, որոնք տեղադրվել են Classroom էլեկտրոնային հարթակում, կազմվել են նաև ինքնուրույն աշխատանքների առաջադրանքները, գործնական և լաբորատոր աշխատանքների հարցաշարերը և առաջադրանքները, վերանայվել է անհրաժեշտ գրականության ցանկը:

Քննարկվել և հաստատվել են մագիստրոսական ատենախոսությունների, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները, կազմվել և հաստատվել են քննական տոմսերը, տարբերակներն ու թեստերը:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ամբիոնի կողմից իրականացվել է առկա, հեռակա ուսուցման և մագիստրատուրայի ուսումնական պլանների, առարկայական նկարագրերի վերանայում և կատարելագործում:

2019 թ-ի ընթացքում պարբերաբար իրականացվել են դասալսումներ:

Ամբիոնի բոլոր դասախոսներն էլ ակտիվ մասնակցություն են ունեցել բուհական և հանրապետական գիտական նստաշրջաններին, հանդես են եկել զեկուցումներով և հոդվածներով, այդ աշխատանքներին մասնակից դարձնելով նաև հայցորդներին, մագիստրոսներին և որոշ ուսանողների:

Ամբիոնը համագործակցում է արտասահմանյան մի քանի երկրների համալսարանների հետ, որոնց շրջանակներում իրականացվել են մի շարք ծրագրեր:
Հաշվետու տարում ամբիոնը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն՝ հիմնականում կենտրոնանալով ուսանողակենտրոն ուսուցման մոտեցման վրա:
Ամբիոնում ուսանողների գնահատման ժամանակ հաշվի են առնվել ԲՈՒՀ-ի կողմից առաջարկվող հիմնական տարբերակները, գնահատման բաղադրիչների կառուցվածքը, կապելով այն ուսումնառության արդյունքների հետ, առաջնային համարելով ակադեմիական ազնվության ապահովումը:
Հաշվի առնելով աշխարհագրություն մասնագիտության մանկավարժական շարունակական կրթությանը ներկայացվող միջազգային պահանջները, ինչպես նաև աշխարհագրություն գիտության և լանդշաֆտային պլանավորման ներքին կառուցվածքի առանձնահատկությունները, ներառարկայական տրամաբանական կապերը, ամբիոնը նպատակահարմար է գտել կատարելու ուսումնական պլանների վերանյում, թարմացում:
<<Տարածաշրջանային միջդիսցիպլինար հետազոտություններ Կովկասում՝ կայուն զարգացման նպատակով>>, այս ծրագրի շրջանակներում համագործակցում ենք Ավստրիայի Վիեննայի պետական համալսարանի և Թբիլիսիի պետական համալսարանի հետ, որի նպատակն է բարձրագույն կրթության ուսումնական ծրագրերում կայուն գիտական և միջդիսցիպլինար հետազոտության ներդրումը՝ շեշտը դնելով Կայուն Տուրիզմի զարգացմանը:
Ամբիոնը <<Լեռնային երկրների կայուն զարգացում և ռեսուրսների կառավարում>> և <<Տարածաշրջանային միջդիսցիպլինար հետազոտություններ Կովկասում՝ կայուն զարգացման նպատակով>> միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվել են միջազգային ֆորումներ և դաշտային հետազոտական աշխատանքներ Տավուշի, Սյունիքի, Արագածոտնի մարզերում:
Հաշվետու տարում ՊԴԱ և ուսանողները մասնակցել են մի շարք կոնֆերանսների, սեմինարների, օլիմպիադաների, կատարել են գիտահետազոտական աշխատանքներ:
Միջազգային կոնֆերանսներ՝

1. Ֆրանսիա-Փարիզ Եվրո Գեո 2019 /Ա. Խոեցյան, Մ. Մաթոսյան/
2. Ավստրիա ISCONTOUR 2019 / դասախոսներ, ուսանողներ/
3. APPEAR 2019 Վրաստան / Մ. Մաթոսյան, Տ. բաբայան/
4. Российский экономический университет имени Г.В. Плеханова, Ереванский филиал, ,,Образование в XXI веке: проблемы, поиски, решения,, к 15-летию основания филиала

5. Բնագիտական թանգարանները որպես գեոտուրիզմի զարգացման գործոն /Վ. Հովհաննիսյան /

Հանրապետական գիտաժողով

1. Աշխարհագրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Գևորգ կարապետյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55 ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով,

Համալսարանական սեմ.

1. ԲՈՒՀ-ական կրթության և հասարակության արդի մարտահրավերների լուծման գործում,

Ամբիոնային սեմ.

1. Գիտական սեմինար /Անի Մկրտումյան/
2. ,,Աշխարհագրության դասավանդման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման ուղիներն ու միջոցները,,
3. Գիտական սեմինար / Անահիտ Մինասյան/:

2019թ-ի ընթացքում ՊԴԱ-ի կողմից տպագրվել է 27 հոդված, 3 մենագրություն: Միջազգային գիտական ծրագրերի շրջանակներում շարունակվել է ակտիվ համագործակցությունը (Ավստրիայի Վիեննայի համալսարան, Շվեյցարիայի Բեռնի համալսարան, Թբիլիսի պետական համալսարան) եռակողմ երկրների միջև: Մասնավորապես ամռանը իրականացվել է խոշոր միջազգային ֆորում, դաշտային հետազոտական աշխատանքների մասնակցությամբ, որին վերոնշյալ երկրներից մասնկցում էին բազմաթիվ ներկայացուցիչներ: Վերջինս առանձնահատուկ էր նրանով, որ առաջին անգամ հետազոտությունները կրում էին տրանսդիսցիպլինար բնույթ, որը հնարավորություն տվեց հետազոտություններն իրականացնել տարբեր մասնագիտությունների /պատմաբաններ, էկոլոգներ, կենսաբաններ և այլն/, համատեղ հետազոտական մեթոդների կիրառմամբ, որը բարձր գնահատվեց և միջազգաին և թե տեղական փորձագետների կողմից:

Ամբիոնի դասախոսները մշտապես մասնակցել են մանկավարժական համալսարանի վերաբերյալ տեղեկատվության տարածման գործընթացին, բազմաթիվ հանդիպումներ են ունեցել հանրապետության բազմաթիվ հանրակրթական դպրոցների և աշակերտների հետ իրականացրել խորհրդատվական ծառայություններ տարբեր միջոցներով օժանդակել հանրակրթական հաստատություններին: Ամբիոնի շրջանակներում գործում են ,, Հայ Աշխարհագետ գիտակրթական կենտրոն,, ՀԿ-ն և ,,Աշխարհագրության ուսուցիչների և ուսանողների մեթոդմիավորում,, , որոնք մշտապես գործնական կապերի մեջ են նախորդ տարիների շրջանավարտների և հանրակրթական դպրոցների աշխարհագրության ուսուցիչների հետ: Հանրակրթական դպրոցում ակտիվ իրականացվում են ուսումնական, մեթոդական և դաստիարակչական աշխատանքներ:

Ընթացիկ տարում ամբիոնի կողմից հրավիրվել են մի շարք միջազգային հեղինակություն ունեցող դասախոսներ /պրոֆ. Ա. Վալեսյան /Նոր Զելանդիա/, հետազոտող Վրեժ Կիրակոսյան /ԱՄՆ/, Սիմոնե Բեթի /Իտալիա, Մաչերատայի համալսարանի պրոֆեսոր/ և այլն/, որոնց կողմից կարդացված դասախոսությունները և հետազոտության տարբեր մեթոդների կիրառումը էական դեր են խաղացել թե ՊԴԱ-ի և թե ուսանողության գիտական և կրթական որակների բարձրացման գործում:

Ամբիոնը ,,Հայ աշխարհագետ,, գիտակրթական կենտրոն ՀԿ-ի և աշխարհագրության ուսուցիչների մեթոդմիավորման խմբի միջոցով մշտապես կապի մեջ է ամբիոնի տարբեր տարիների շրջանավարտ ուսուցիչների հետ, որի արդյունքում վեր են հանվում տարբեր գիտակրթական հիմնախնդիրներ և դրանց ուղիների բացահայտումներ:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Մ. Մուրադյանը, Ս. Դայանը, Ս. Բաղդասարյանը, ովքեր դրական կարծիք հայտնեցին 2019թ-ին ամբիոնի կոմից իրականացված աշխատանքների վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ* – Ընդունել ի գիտություն, և աշխատանքերը շարունակել նույն կերպ 2020թ-ի ընթացքում:

**2. ԼՍԵՑԻՆ-** Պրակտիկայի ղեկավարների հաղորդումները արտադրական պրակտիկաների վերաբերյալ քննարկման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ամբիոնի վարիչ, պրոֆեսոր՝ **Ա. Խոեցյանը**- Նոյեմբերի 29-ին ավարտվել է մագիստրոսների մանկավարժահետազոտական և հետազոտական պրակտիկաները: Ինքս ղեկավարել եմ աշխարհագրություն մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկա: Երեք ուսանողներ՝ Սահակյան Նարեկ, Սուքիասյան Թամարա , Եփրեմյան Վիկտոր, 2019-թ-ի նոյեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 29-ը մանկավարժահետազոտական պրակտիկան անցկացրեցին Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում, և երկու ուսանողներ ՝ Երանուհի Մանուկյան և Նարինե Թաթոյան, իրենց դիմումի համաձայն պրակտիկան անցկացրեցին համապատասխանաբար Բրիտանական միջնակարգ դպրոցում և Երևանի ,,Վարդանանց ասպետներ,, դպրոցում:

Պրակտիկայի առաջին օրվանից կազմվել է մանկավարժահետազոտական պրակտիկայի աշխատանքային պլանը և տրվել ուսանողներին:

Պրակտիկայի սկզբում ուսանողները կատարել են դասալսումներ ապա դասավանդել 1-3-րդ կուրսերում:

Բոլոր ուսանողները ներկայայցրել են իրենց մանկավարժահետազոտական պրակտիկայի օրագրերը /Նարինե Թաթոյանը և Երանուհի Մանուկյանը ներկայացրել են նաև բնութագիր դպրոցից/ և գնահատվել:

*Մ. Մաթոսյան՝* Մինչ պրակտիկայի մեկնարկը ուսանողների հետ միասին կազմեցինք մասնագիտական առարկաների դասացուցակ, որին կից առանձին աղյուսակով նշվեց

ուսանողների անունները՝ ըստ նախանշված առարկաների դասերի, որը ներբեռնված է նաև քլասրում հարթակ:

· Պրակտիկայի այս փուլը մանկավարժահետազոտական էր, որի ընթացքում ուսանողները ևս մեկ անգամ ծանոթացան մեր փորձառու դասախոսների դասավանդման արվեստին՝ կիրառած ուսուցման մեթոդներին, ուսուցման միջոցներին:

· Դասալսումների փուլին զուգահեռ նրանք նույնպես հնարավորություն ունեցան մասնակցելու դասավանդման պրոցեսին, իհարկե գործնական պարապմունքների շրջանակում:

Նշեմ, որ նրանից շատերին հաջողվեց հետաքրքիր և բովանդակալից դասեր վարել:

Պրակտիկայի ժամանկահատվածում եղան նաև բացակայություններ, սակայն դրանք հարգելի բացակայություններ էին: Բոլոր պրակտիկանտները գնահատվել են: Ընդհանուր առմամաբ մանակավարժահետազոտական պրակտիկան արդյունավետ էր, սակայն բարեփոխման և բարելավման անհարժեշտությունը շարունակական է:

